ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

19/02/2024 - 05/03/2024

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 4 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 4 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

2 կողմ

0 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Կարեն Աբրահամյան 19.02.2024 14:54:24	Նախագծից կարելի է ենթադրել,որ նշված 3000 ընտանիքները անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման պահից կզրկվե՞ն նպաստից	Անապահովության գնահատման նոր համակարգը արմատապես տարբերվելու է գործող համակարգի գնահատման մեթոդաբանությունից: Ուստի նշված 3000 ընտանիքների՝ նպաստից զրկվելու վերաբերյալ եզրահանգում անելը ճիշտ չէ: Այս, ինչպես նաև մյուս ընտանիքների նպաստի իրավունքի հարցը կդիտարկվի գնահատման նոր համակարգի մեթոդաբանությամբ:	

2	Կարեն Աբրահամյան 19.02.2024 14:28:50	Անապահով համարվող ընտանիքի մեկ չափահաս անձին հավասարեցված ինչքա՞ն գումարն է համարվելու աղքատության շեմ և նշանակվելու նպաստ	Ներկայացված առաջարկը դուրս է Նախագծի կարգավորման առարկայի շրջանակից: Այդուհանդերձ, նախատեսվում է նոր համակարգի թիրախ խումբ սահմանել ծայրահեղ աղքատ ընտանիքներին:
3	Կարեն Աբրահամյան 19.02.2024 14:26:30	Անապահովության գնահատման նոր համակարգով նպաստի ո՞ր տեսակներն են պահպանվելու (ընտանեկան, սոցիալական, հրատապ օգնություն)	Առաջարկը դուրս է Նախագծի կարգավորման առարկայի շրջանակից: Այդուհանդերձ, նախատեսվում է նոր համակարգի շրջանակում ունենալ մեկ առավելագույնը 12 ամսյա աջակցություն (անապահովության նպաստ) և կարճաժամկետ՝ հրատապ օգնություն (եռամսյա հրատապ օգնություն, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում):
4	Կարեն Աբրահամյան 19.02.2024 14:24:15	Իսկ ե՞րբ կներդրվի անապահովության գնահատման նոր համակարգը ,մոտավոր կամ հստակ ժամկետ կա՞	Ժամկետները պայմանավորված են Համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունմամբ: